

քով Մատենադարան մը հաստատելու համար ազգային մատենագրութեան հատորները կը շտա-
ցընէ թէ նոր ընդօրինակութիւններով եւ թէ նոր եւ բոլորովին առաջին տպագրութիւններով: Տպագրութեամբ եղած այդ առաջին հրատարակութիւններ զուտ ազգային կեանք մը շինելու ոգի մ'ունին: Ազգ մը, որ լուսաւորութեան պէտք ունի, պէտք է որ ամէնէն յառաջ լաւ ճանչնայ ինքզինքը, իր գոյութիւնը, իր համայնքը: Այսպիսի ծանօթութեան եւ ուսումնասիրութեան աղբիւրն է ազգային մատենագրութիւնը: Ազգային կեանքի անցեալ բոլոր տեւողութիւնը կ'ուսումնասիրուի հոն. անոր ազգախօսութիւնը, անոր կրօնախօսութիւնը, անոր յարաբերութիւնները ժողովուրդներու եւ ազգերու հետ, անոր բնախօսական եւ հոգեւոր կեանքերն արտայայտող շատ մը երեւոյթներ ու իրողութիւններ:

Մենք այս բոլոր տեսութիւններով՝ Պոլսոյ պատրիարքութեան կեանքին վրայ առաջին անգամ է որ կը դիտենք եւ կը շեշտենք Այլտիս գերը: Այլտտ մեծ միտք մ'է: Այս բարձր հանգամանքով երեւան կու գայ Նա իր գործերուն մէջ: Եւ իր Մատենադարանը, որ թէ իր Գպրոցը կը ներկայացընէ եւ թէ իր ժամանակի ոգին կը ցոլացընէ, իր ամենամեծ գործերէն է բանասիրական եւ մատենագրական կրկին տեսակէտներով:

«Այլտտ գրասէր» գլխին մէջ՝ Այլտտի գրասիրութեան ոգին ու պարագաները ուսումնասիրելու ատեն ցոյց տուինք թէ ինչպէս գործերու մարմին տուաւ Նա:

Հրատարակութիւնները, սրշափ ալ զուտ ազգային կամ ազգային եկեղեցւոյ վերաբերեալ գործեր ըլլան, արագ ընդօրինակութենէ մը տարբերութիւն չունին ատոնք գիտնօրէն: Այս տեսութիւնը կը հիմնենք հրատարակութեան համար ընդունուած արդի գիտնական դրութեան վրայ: